ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ ՖԻԼԱԴԵԼՖԻԱՅԻ ՀԱՅՈՑ Ս. ԵՐՐՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՕԾՄԱՆ ԱՌԹԻՎ

ՎԱՂԳԷՆ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ, ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱՂԳԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱՂԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՅՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

ԲԱՐԵԽՆԱՄ ԱՌԱՋՆՈՐԴԻՆ ՀԱՅՈՑ ՀԻՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ, ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՍԻՈՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ, ՀՈԳԵՒՈՐ ՍՊԱՍԱՒՈՐԱՑ, ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԵՒ ՇԻՆՈՒԹԵԱՆ ՅԱՆՁՆԱԽՄԲԻՆ ՖԻԼԱԴԵԼՖԻՈՅ ՀԱՅՈՑ ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԵՒ ՀԱՄԱՅՆ ՀԱՒԱՏԱՑԵԱԼ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ, ՀԱՐԱՁԱՏ ՈՐԴԻՈՅ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ, ՔՐԻՍՏՈՍԱՒԱՆԴ ՈՂՋՈՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

«Զի Աստուած ընդ մեզ է»:

Անա այս հաւատքով ապրեցան մեր լուսաբնակ նախնիք դարեր շարունակ: Այս հաւատքով կ'ապրին այսօր ու պիտի ապրին միշտ մեր Եկեղեցին և մեր ազգը համայն: Մեզի համար անհուն ուրախութիւն է տեսնել, թէ Դուք բոլորդ, սիրելիներ Մեր, այս նոյն հաւատքով կը բարձրացնեք այսօր Ձեր աղօթքի տունը, որուն Ս. Սեղանէն պիտի բաշխուի Ձեզի ամենուդ և Ձեր զաւակներուն և անոնց զաւակներուն՝ Աստուծոյ խօսքը՝ աղբիւրը լոյսին, կեանքին և յաւէրժութեան:

Փա՜ռք և գոհութի՜ւն Տիրոջ Ամենակալին՝ Ձեր այս հոգևոր յաղթանակին համար: Մենք, իբրև Հայոց Հայրապետ, կ'օրհնենք և կը շնորհաւորենք զՁեզ բոլորդ, Ձեր կատարած անձնուրաց աշխատանքին համար, որով յաջողութեամբ պսակուեցաւ Ձեր Աստուածահաճոյ և ազգանուէր ձեռնարկը:

Թող միշտ հաստատ և շէն մնայ Ձեր նորակառոյց եկեղեցին:

Թող Աստուած մնայ միշտ պահապան և օգնական Ձեր եկեղեցիին և ժողովուրդին, որպէսզի անոնք անարատ ու պայծառ պահպանեն իրենց քրիստոնէական և հայկական հոգին:

Եւ Դուք, հարազատ զաւակներ Մեր, որ կը բնակիք «Եղբայրսիրութեան ոխտ»-ի քաղաքին մէջ, իրաւ եղբայրական սիրով միաբանած, խաղաղ ու համերաշխ ապրեցէք, զօրացէք ու աճեցէք, Ձեր Ս. Եկեղեցիին ապահով հովանիին ներքև: Զի Հայոց ազգի քրիստոնէական հաւատքը և հայկական հոգին, և անոնցմէ ճառագայթող լոյսը, քաղաքակիրթ աշխարհի հրաշալիքներէն մին կը հանդիսանան:

Պահեցէ՛ք, պաշտպանեցէ՛ք և պաշտեցէ՛ք այդ լոյսը, որպէսզի ապրիք յաւէտ և չմեռնիք:

Ամենայն հայոց սուրբ հաւատքի վէմ Մայր Աթոռ Ս. Էջմիածնէն Ձեզի ամենուդ հայրական ողջո՛յն և հայրապետական օրհնութի՛ւն:

Ողջո՛յն և օրհնութի՛ւն նաև Ձեր մեծ երկրին՝ Ամերիկայի Միացեալ Նահանգներուն և անոր քրիստոսասէր սքանչելի ժողովուրդին:

Արդ, հարազատնե՛ր Մեր, **«Հսկեցէք, հաստատուն կացէք ի հաւատս, ժրացարուք, զօրացարուք: Ամենայն ինչ Ձեր սիրով եղիցի»** (Ա Կորնթ. ԺԶ 13—14):

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 14-ն մարտի
1966 Փրկչական ամի,
և ի տումարիս Հայոց ՌՆԺԵ,
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի: